Լոս Անջելեսի Շրջանի Հանրային Առողջության Վարչություն I Հաճախակի տրվող հարցեր (ՀՏՀ-ներ)

ՍԻԼԻԿՈԶ

Սիլիկոզն առաջանում է, երբ մարդը ներս է շնչում սիլիցիումի փոշի, ինչը հանգեցնում է թոքերի բորբոքման, սպիների և շնչառության դժվարացման: Սիլիկոզը կարող է առաջացնել թոքերի ծանր հիվանդություն, երիկամների հետ կապված խնդիրներ, քաղցկեղ և մահ: Հիվանդության սկիզբը կախված է այն հանգամանքից, թե որքան շատ փոշու հետ է եղել շփում և թե որքան երկար է տևել շփումը, ընդ որում՝ մեծ քանակությամբ փոշու հետ շփումը արագացնում է հիվանդության զարգացումը: Սիլիկոզը անդառնալի է, բայց լիովին կանխարգելելի, եթե կիրառվեն համապատասխան նախազգուշական միջոցներ:

Ի՞ՆՉԸ ԿԱՐՈՂ Է ԱՌԱՋԱՑՆԵԼ ՍԻԼԻԿՈԶ

Արհեստական քարից սալերը հիմնականում կազմված են քվարց հանքանյութից, որը պարունակում է մեծ քանակությամբ սիլիցիում: Արդյունքում, այս արտադրանքը սովորաբար պարունակում է ավելի քան 90% սիլիցիում: Այս տոկոսը զգալիորեն ավելի բարձր է, քան բնական քարից սալերի, օրինակ՝ գրանիտի կամ մարմարի մեջ եղած սիլիցումի տոկոսը: Կալիֆորնիայում սիլիկոզի դեպքերի մեծ մասը գրանցվել է Լոս Անջելեսի Շրջանում գտնվող արհեստական քարերի արտադրության արհեստանոցներում, որտեղ շահագործման պարտադիր կանոնակարգերը չեն պահպանվում:

Ո՞ՒՄ ՀԱՄԱՐ Է ՎՏԱՆԳԸ ՄԵԾ

Քանի որ արհեստական քարից սալերի մեջ սիլիցիումի ծավալը մեծ է, սիլիկոզի վտանգը մեծ է այդ սալերից սեղանաածակեր (countertop) կտրող այն աշխատողների համար, որոնք չեն օգտագործում շնչուղիները պաշտպանող համապատասխան միջոցներ:

Գործատուները պետք է աշխատողներին տրամադրեն գործիքներ՝ նյութը թաց վիճակում և անվտանգ կտրելու և մշակելու համար, ինչպես նաև պետք է տրամադրեն համապատասխան անձնական պաշտպանիչ միջոցներ, օրինակ՝ շնչադիմակներ (ռեսպիրատոր)՝ սիլիցիումի փոշու հետ շփումը սահմանափակելու համար:

ՈՐՈ՞ՆՔ ԵՆ ԱԽՏԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ԲՈՒԺՄԱՆ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ

Սիլիկոզի վաղ փուլերում կարող են ախտանիշներ չլինել:

Քանի որ սիլիցիումի փոշին ժամանակի ընթացքում կուտակվում է օրգանիզմում, այն առաջացնում է թոքերի վնասվածք և այնպիսի ախտանիշներ, ինչպիսիք են հազը, շնչառության դժվարությունը, կրծքավանդակի ցավը, հոգնածությունը: Ախտանիշները հաճախ շփոթում են այլ առողջական խնդիրների հետ, և դրանք կարող են վատթարանալ ժամանակի ընթացքում, նույնիսկ եթե սիլիցիումի փոշու հետ շփումը դադարի:

Սիլիկոզի բուժում չկա: Այն ցավոտ, վատթարացող հիվանդություն է, որը շատ դժվարացնում է նորմալ շնչառությունը: Բժիշկները կարող են թեթևացնել ախտանիշները՝ որոշակի հարմարավետություն ապահովելու համար, օրինակ՝ թթվածնային թերապիայի և ինհալատորների միջոցով, իսկ որոշ դեպքերում թոքերի փոխպատվաստումը կարող է երկարացնել հիվանդի կյանքը:

Ի՞ՆՉ ԿԱՐՈՂ ԵՔ ԱՆԵԼ ԴՈՒՔ

Աշխատողների շրջանում սիլիցիումի հետ շփման պատճառով առաջացող առողջական ճգնաժամը, որը հանգեցնում է սիլիկոզի, կապված է սեղանաածակերի համար արհեստական քարի օգտագործման աճի հետ: Դուք կարող եք օգնել՝ նրանց գործատուներից պահանջելով անվտանգ գործելակերպ և ընտրելով քիչ սիլիցիում պարունակող սեղանաածակեր: Տեղադրվելուց հետո արհեստական քարը սպառողների համար առողջական վտանգ չի ներկայացնում:

Հավելյալ տեղեկությունների համար՝

Կապ հաստատեք Cal/OSHA-ի հետ 833-579-0927 հեռախոսահամարով և տեղում խոսեք ներկայացուցչի հետ:

Կարող եք նաև այցելել **worksafewithsilica.org**

(Armenian)

County of Los Angeles Public Health